ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Համայնքային ջրամատակարարման ծրագիր
Վարկ No8129-AM

Պայմանագրի անվանում: De20-De200 տրամագծի խմելու ջրի պոլիէթիլենե PE100 խողովակների (55 կմ) գնում

Համարը (համաձայն Գնումների Պլանի)**: MWP-B2.8/2-9**

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային Բանկից Համայնքային Ջրամատակարարման Ծրագրի ծախսերը հոգալու համար և մտադիր է այդ վարկի գումարների մի մասն օգտագործել **De20-De200 տրամագծի խմելու ջրի պոլիէթիլենե PE100 խողովակների (55 կմ) գնման համար, MWP-B2.8/2-9:** Պայմանագիրը համաֆինանսավորվելու է Հայաստանի Կառավարության կողմից: Մրցութային գործընթացը ղեկավարվում է Համաշխարհային Բանկի կանոններով և ընթացակարգերով:

2. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հրավիրում է իրավասու և որակավորված հայտատուներին կնքված հայտեր ներկայացնել՝ **De20-De200 տրամագծի խմելու ջրի պոլիէթիլենե PE100 խողովակների (55 կմ) գնման համար, MWP-B2.8/2-9**

Որակավորման պահանջները ներառում են.

Եթե Հայտատուն արտադրողն է և եթե Հայտատուն արտադրողը չէ, ապա երկու դեպքում կիրառվում է հետևյալ պահանջը.
-Հայտատուները պետք է ներկայացնեն առաջարկվող հայտի գնին համարժեք ֆինանսական ռեսուրսներ կամ վարկային գծի առկայություն:
Եթե Հայտատուն արտադրողն է, ապա՝
-Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային ապացույցներ, որոնք վկայում են հետևյալ փորձի առկայության մասին. վերջին երեք (3) տարիների ընթացքում նմանատիպ ապրանքների արտադրության փորձ (նմանատիպ նշանակում է պայմանագրի բնույթը՝ պոլիէթիլենե PE խողովակների մատակարարում և/կամ արտադրություն):
Եթե Հայտատուն արտադրողը չէ, ապա՝
-Հայտատուն պետք է ներկայացնի ապացույցներ վերջին երեք (3) տարիների ընթացքում հաջողությամբ իրականացված նմանատիպ առնվազն մեկ (1) պայմանագիր (նմանատիպ նշանակում է պայմանագրի բնույթը՝ պոլիէթիլենե PE խողովակների մատակարարում և/կամ արտադրություն):

Տեղական Մատակարարները պետք է ներկայացնեն տեղեկանք (տրված հայտի ներկայացման վերջնաժամկետից 15 օրից ոչ ուշ) ՀՀ հարկային մարմինների նկատմամբ պարտավորություններ չունենալու մասին**:**

3. Մրցույթն անցկացվելու է «Ազգային մրցույթի» (NCB) ընթացակարգին համապատասխան, ինչը ամրագրված է Համաշխարհային Բանկի «Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՎՋՄԲ-ի փոխառությունների և ՋՄԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից» (Գնումների ուղեցույց, 2011թ. հունվար, լրամշակված՝ 2014թ հուլիսին) և բաց է բոլոր իրավասու հայտատուների համար՝ ինչպես սահմանված է Ուղեցույցով: Ի լրումն, Հայտատուների ուշադրությունը հրավիրվում է ուղեցույցի 1.6 և 1.7 կետերին, որտեղ մասնավորապես նշվում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

4. Հետաքրքրված իրավասու հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գրասենյակում և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը՝ ներքոնշյալ հասցեով, աշխատանքային ժամերին 10.00-ից մինչև 17.00-ը (տեղական ժամանակով):

5. Շահագրգիռ հայտատուները կարող են ստանալ Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթն անգլերեն լեզվով՝ գրավոր դիմում ներկայացնելով ներքոհիշյալ հասցեով և վճարելով չփոխհատուցվող գումար 14 000 դրամ: Վճարման մեթոդն է՝ ուղիղ փոխանցում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներքոնշյալ հաշվեհամարին՝

Հայկական դրամի հաշիվ No. 247010078175, Արդշինինվեստբանկ (SWIFT կոդ՝ ASHBAM22), ՀՀ, ք. Երևան 0010, Գրիգոր Լուսավորիչ փ. 13:

Մրցութային փաստաթղթերը կուղարկվեն սովորական փոստով կամ կհանձնվեն հայտատուների ներկայացուցիչներին առձեռն:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ներքոհիշյալ հասցեով մինչև **2015թ. Ապրիլի 16-ը, ժամը 15:00 (տեղական ժամանակով)** կամ ավելի շուտ: Էլեկտրոնային տարբերակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացած հայտերը կմերժվեն: Հայտերը բացվելու են **2015թ. Ապրիլի 16-ին, ժամը 15:00 (տեղական ժամանակով)** ներքոնշյալ հասցեում՝ հայտատուների ներկայացուցիչների և մասնակցելու ցանկություն հայտնած ցանկացած ոգու ներկայությամբ:

7. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն **Հայտի երաշխիքով-2,500 000 ՀՀ դրամ գումարով:**

8. Վերը հիշատակված հասցեն հետևյալն է.

Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿ ՓԲԸ)
Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինություն
Պրն. Ն. Գևորգյան՝ ՀՋԿ ՓԲԸ-ի ՆԾՀ տնօրեն
Քրիստինե Ղամբարյան՝ Գնումների մասնագետ
Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ
0010, Երևան, ՀՀ
Հեռ./ֆաքս (+374 10) 54 28 77
էլ-փոստ: ngevorgyan@armwater.am, kghambaryan@armwater.am,
echilakopyan@armwater.am